ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2015-2-2-Ա

ք. Երևան 18.03.2015թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2015 թվականի մարտի 18-ի նիստում քննարկեց 2015 թվականի հունվարի 13-ին արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ Դաբուր Ինդիա Լիմիթիդ (8/3 Asaf Ali Road, New Delhi - 110 002, India IN) ընկերության (այսուհետ՝ բողոքարկող) «Dabur AMLA» (հայտ №20140142) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.
«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ կետերի եւ ՀՀ կառավարության 2010 թվականի նոյեմբերի 18-ի N 1538-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու եւ քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 90-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը չունի տարբերակիչ հատկություն եւ բաղկացած է այնպիսի նշումներից, որոնք առեւտրում ծառայում են ապրանքի տեսակը, ստեղծման նպատակը կամ ապրանքների այլ բնութագրերը նշելու համար: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման, քանի որ պարունակում է «AMLA» բառային տարրը, որը չի կարող ստանալ ինքնուրույն պահպանություն, քանի որ այն հնդկական հատապտղի անվանում է, որի յուղն օգտագործվում է տարբեր բնագավառներում, այդ թվում նաեւ կոսմետոլոգիայում:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները: Քանի որ «AMLA» բառային տարրը հնդկական հատապտղի անվանում է, որի յուղն օգտագործվում է տարբեր բնագավառներում, ապա ներկայացված ապրանքային նշանի գրանցումը առանց այդ տարրի դիսկլամացիայի կհակասի «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին: Հետևաբար կոլեգիան

բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքն ամբողջությամբ մերժելու և կրկնական փորձաքննության որոշումն ուժի մեջ թողնելու վերաբերյալ առաջարկը:

Բողոքարկողը ներկայացրեց իր անհամաձայնությունը որոշման վերաբերյալ և ներկայացրեց իր տեսակետը:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել արտոնագրային հավատարմատար Սարգիս Կնյազյանի կողմից ներկայացված՝ «Dabur AMLA» (հայտ №20140142) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ